պիտի մարմնանային հոյակապ եկեղեցիներով. հաւատքի ջերմեռանդութիւնը լեռը պիտի զարդարէր զանազան ազգաց եկեղեցիներով և վանքերով։ Առաջին հիմնարկութիւնն էր Աշակերտարանը, ճիշդ ա՛յն այրին վրայ՝ ուր աշակերտք հաւաքուած էին Քրիստոսի վերջին գիշերը, և իրազեկ կ'ըլլային աշխարհի և մարդոց նկատմամբ Քրիստոսի հաղորդած խորհրդաւոր գաղտնիքներուն և միանգամայն կ'ուսանէին աղօթելու ստիպողականութիւնը. երկրորդ եկեղեցին կը բարձրանար ճիշդ այն բլրին վրայ՝ ուրկէ մեր Փրկիչը համբարձաւ յերկինս։

2. Պաշտամունքի ժողովներ Աշակերտարանի եւ Բլրի եկեղեցեաց մէջ.

Այս երկու եկեղեցեաց շինութենէն յառաջ, Աշակերտաց այրին մէջ և Համբարձման տեղւոյն վրայ կը կատարուէին պաշտամունք, նախապէս Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Ս. Յակոբոս Տեառնեղբօր և ապա՝ Ս. Կիւրեղ Երուսաղեմացւոյն յօրինած ընթերցուածոց կանոնին համաձայն։ Մենք այս իսկ պատճառաւ, նոյն երկու եկեղեցեաց հիմնարկութեան և զանազան փոփոխութեանց պատմութիւնը գրելէ յառաջ, յարմար կը նկատենք նոյն նուիրական վայրերու մէջ տեղի ունեցած պաշտամունքի ժողովներու նկարագրութիւնը ընել։ Այդ կանոնական սովորութիւնը, որ նախնական դարերէն կը հասնի մեզ, հնութեան բոյր մը ունի. այդ տեսակէտով է որ նոյն կանոններն աւանդող յիշատակարանները խիստ թանկագին են և չահեկան։ Թէև մեր ձեռագիր ճաշոցները մեծագոյն մասով անոնց տեղեակ կ'ընեն մեզ, բայց աւելի հնագոյններն, ինչպէս Օքսֆորտի և Փարիզի Ազգային Մատենադարանի Է. և Թ. դարու ձեռագիր ճաշոցներն, աւելի յստակ և մանրամասն կը նկարագրեն մեզ։ Մեր Ս. Աթոռն ալ ունի երկաթագիր ճաշոց մը, որ Մաշկևոր Վանքին մէջ ընդօրինակուած է, 1192ին, Վարդան գրչի մը ձեռքով, և 1318ին ալ ի գործածութեան է մեր Ս. Հրեշտակապետի վանքին մէջ, յԵրուսաղէմ։ Ցայտնի է թէ ան ընդօրինակուած է հնամենի ճաշոցէ մը։ Պաշտամունքի ժողովներու մասին հաղորդած տեղեկութիւնները կը հասնին Դ. կամ Ե. դարէն։ Նոյն երկաթագիր ճաշոցէն կը քաղենք պաշտամունքի այն ժողովներուն նկարագրու-